Հայկական Բժշկական Ասոցիացիա

Հասարակական երկխոսության և
զարգացումների կենտրոնի աջակցությամբ

Վերջնական հաշվետվություն

«Քաղաքային տրանսպորտում ՀՀ հակածխախոտային օրենսդրության կիրառման մոնիտորինգ և հասարակության իրավական իրազեկության բարձրացման միջոցով աջակցություն օրենքի կատարմանը» ծրագրի

մայիսի 15 – օգոստոսի15

Երևան
2006

Հայկական Բժշկական Ասոցիացիա

Armenian Medical Association

«Քաղաքային տրանսպորտում ՀՀ հակածխախոտային օրենսդրության կիրառման մոնիտորինգ և հասարակության իրավական իրազեկության բարձրացման միջոցով աջակցություն օրենքի կատարմանը» ծրագրի

Վերջնական հաշվետվություն

Հայկական Բժշկական Ասոցիացիա հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ ՀԲԱ) 2006 թվականի մայիսի 15-ին պայմանագիր է ստորագրել «Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն» (ՀԵԶԿ) հասարակական կազմակերպության հետ՝ «Քաղաքային տրանսպորտում ՀՀ հակածխախոտային օրենսդրության կիրառման մոնիտորինգ և հասարակության իրավական իրազեկության բարձրացման միջոցով աջակցություն օրենքի կատարմանը» ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) իրականացման համար 2 300 000 դրամի չափով դրամաշնորհ տրամադրելու վերաբերյալ: Ծրագրի տևողությունը կազմում է երեք ամիս՝ սկսած պայմանագիրը ստորագրելու օրից (2006 թվականի մայիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը):

Հաշվետու ժամանակաշրջանը ներառում է Ծրագրի ողջ ընթացքը, այն է՝ մայիսի 15-ից օգոստոսի 15-ը:

Առաջին 16 օրում (մայիսի 15 - մայիսի 31) կատարվել են Ծրագրի նախապատրաստական աշխատանքները, այդ թվում՝ աշխատանքային թիմի կազմավորում, ժամանակացույցի կազմում և համապատասխան միջոցառումների մեթոդների մշակում: Ծրագրի աշխատակազմի հետ աշխատանքային պայմանագրերը (պատճենները կցվում են) կնքվել են հունիսի 1-ից: Այդ ամսաթվից սկսվել է բուն ծրագրի իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ծրագրային առաջարկում ներկայացված խնդիրները կատարելու ուղղությամբ իրականացվել են հետևյալ նախատեսված միջոցառումները.

Խնդիր 1

Գնահատել երթուղային տաքսիների վարորդների երթուղու ընթացում ուղևորների ներկայությամբ ծխախոտի օգտագործման երևույթի տարածվածությունը, ինչպես նաև ուղևորների վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ և նրանց՝ «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի և երկրորդային կամ պասիվ ծխելու վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը:

Խնդիր 1-ի իրականացմանն ուղղված միջոցառումներ

1.1 Երկու տեսակի հարցաթերթիկների մշակում

Մշակվել է երկու տեսակի հարցաթերթիկ՝ առանձին-առանձին երթուղային տաքսիների վարորդների և ուղևորների համար: Հարցաթերթիկների օրինակները ներկայացված են առաջին փուլի հաշվետվության ***Հավելված 1-ում***:

1.2. Հարցումների անցկացում

Առաջին հարցումն իրականացվել է պատահականորեն ընտրված 42 երթուղիների վերջնակետերում 119 վարորդի հետ (100 նախատեսվածի փոխարեն): Հարցումն անցկացվել է անանուն և կամավոր սկզբունքով:

Ուղևորների հարցման համար ընտրվել է Երևանի բոլոր համայնքներից մեկական առավել ծանրաբեռնված կանգառ: Հարցմանը մասնակցել են տարբեր երթուղիների երթուղային տաքսիների ծառայությունից օգտված 530 ուղևոր (500 նախատեսվածի փոխարեն)՝ 244 կին և 286 տղամարդ: Հարցումն անցկացվել է անանուն և կամավոր սկզբունքով:

1.3 Արդյունքների վերլուծություն և ամփոփում

Լրացված հարցաթերթիկներից ստացված տվյալները մուտքագրվել են համակարգչային շտեմարան և ենթարկվել հետագա վերլուծության (վիճակագրական մշակման) և արդյունքների ամփոփման:

Վարորդների շրջանում անցկացված հարցման արդյունքների համաձայն, հարցմանը մասնակցած վարորդների 77.3%-ը եղել է ծխող, որոնց 45.9%-ը ծխախոտ օգտագործել է նաև ուղերթի ընթացքում: Ուղերթի ընթացքում ծխախոտ օգտագործող վարորդների միայն 23.6%-ից են ուղևորները պահանջել հանգցնել ծխախոտը: Վարորդների միայն 41.9%-ն է

տեղյակ այն մասին, որ «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքն (այսուհետև՝ Օրենք) արգելում է երթուղային տաքսիներում ծխելը (ուղերթի ընթացքում ծխախոտ օգտագործողների 30.2%), իսկ 21.3%-ն ընդհանրապես տեղյակ չէ Օրենքի մասին: Հարցված վարորդների 84.6%-ը տեղյակ է, որ պասիվ ծխելը վնաս է հասցնում առողջությանը:

Ուղևորների շրջանում անցկացված հարցման արդյունքների համաձայն, հարցմանը մասնակցած անձանց 89%-ը դեմ է արտահայտվել երթուղային տաքսիներում ծխելուն, ընդ որում ծխախոտ օգտագործող ուղևորների շրջանում այս ցուցանիշը կազմել է 81.6%, իսկ ծխախոտ չօգտագործողների շրջանում՝ 95.4%: Ուղերթի ընթացքում վարորդի կողմից ծխախոտի գործածման երևույթին դեմ են արտահայտվել տղամարդկանց 94.1%-ը և կանանց 83.8%-ը: Դարձյալ ըստ ուղևորների, երթուղու ժամանակ վարորդը ծխախոտ է օգտագործում 50.4% դեպքերում, և նրան ուղևորները նկատողություն են արել 20% դեպքերում: Նկատողություն անելուց խուսափելու պատճառներից ամենատարածվածն էին՝ խնդրի նկատմամբ անտարբերությունը (46.5%), կոնֆլիկտային իրավիճակից խուսափելը (37%), իսկ այլ պատճառների միջև առավել հաճախ նշվում էր, որ դա անիմաստ է (8%): Երթուղային տաքսիներում ծխելն Օրենքով արգելված լինելու մասին գիտեին հարցմանը մասնակցած ուղևորների 33.8%-ը, իսկ 33,7%-ն ընդհանրապես տեղյակ չէին Օրենքի մասին: Հարցված ուղևորների 88.2%-ը տեղյակ է, որ պասիվ ծխելը վնաս է հասցնում առողջությանը (ծխող ուղևորների 81% և չծխողների 94.7%, կանանց 83.5% և տղամարկանց 92.9%):

Հարցը	Վարորդներ	Ուղևորներ
Վարորդը ծխում էր ուղերթի ընթացքում	45,9%	50,4%
Ուղևորները նկատողություն արեցին	23,6%	20%
Վարորդը հանգցրեց ծխախոտը	60%	36%
Գիտեն օրենքի մասին	41,9%	33,8 %
Գիտեն պասիվ ծխելու վտանգի մասին	84,6%	88,2%

Հարցման արդյունքների ամփոփմամբ պարզվեց, որ, ընդհանուր առմամբ, վարորդների և ուղևորների կողմից տրված գնահատականները

երթուղային տաքսիներում ծխելու խնդրի վերաբերյալ գրեթե չեն տարբերվում, բացառությամբ վարորդի կողմից ուղերթի ընթացքում ծխախոտի հանգցնելուն առնչվող հարցադրմանը:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ.

- Երևան քաղաքի երթուղային տաքսիների վարորդների շրջանում ծխախոտի օգտագործումը բավականին տարածված է՝ 10 վարորդից գրեթե 8-ը: Միևնույն ժամանակ, վարորդների ճնշող մեծամասնությունը գիտի, որ պասիվ ծխելը վնասում է մարդու առողջությանը՝ 10 վարորդից գրեթե 8-ը: Այնուամենայնիվ, մոտավորապես ամեն երկրորդ վարորդը ծխում է երթուղու ժամանակ: Ընդհանուր առմամբ, նրանց մոտ կեսը տեղյակ չէ այն մասին, որ Օրենքն արգելում է տրանսպորտում ծխելը:
- Ուղևորները նույնպես մեծ մասամբ գիտեն պասիվ ծխելու վտանգի մասին, իսկ Օրենքի մասին տեղեկացված է միայն յուրաքանչյուր երրորդ ուղևորը: Անբավարար ցածր մակարդակի վրա է մնում նաև իրենց իրավունքները պաշտպանելու ուղևորների պատրաստակամությունը:

<u>Խնդիր 2.</u>

Մոտիվացնել Երևանի միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող ՍՊԸ տնօրեններին՝ իրենց սպասարկման ոլորտի երթուղիներում կատարելու ՀՀ Օրենքը:

2.1 Նույնականացնել Երևան քաղաքի միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող ՍՊԸ-ները և ձեռք բերել հանդիպման պայմանավորվածություններ:

Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատարի հետ ՀԲԱ ներկայացուցիչների նախնական զրույցից պարզվել էր, որ Երևանի միկրոավտոբուսային երթուղիները սպասարկվում են ՍՊԸ-ների կողմից, որոնց գործունեությունը կանոնակարգվում է իրենց և քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրերով: Նպատակ ունենալով հանդիպում կազմակերպել նշված ՍՊԸ տնօրենների հետ՝ ՀԲԱ-ն դիմել է Երևանի քաղաքապետարան և «Երևանտրանս» ՓԲԸ, որն անմիջականորեն

առնչվում է այդ ընկերությունների հետ և ստացել բոլոր 67 ընկերությունների կոնտակտային տվյալները, ինչպես նաև յուրաքանչյուրի կողմից սպասարկվող երթուղիների համարները (կցված են առաջին փուլի հաշվետվությանը):

Ստացված ցուցակով բոլոր ՍՊԸ տնօրեններից հաջողվել է կապ հաստատել 55-ի հետ (քանի որ տրամադրված հեռախոսների մեծամասնությունը բջջային ցանցի համարներ էին, դրանց մի մասն արդեն չէր համապատասխանում տվյալ ՍՊԸ-ի իրական կոնտակտային համարին), որոնց մանրամասնորեն ներկայացվել է Ծրագիրը, ս.թ. հուլիսի 14-ին նախատեսված հանդիպման նպատակը, խնդիրները, հիմնական միջամտությունները և Ծրագիրի կարևորությունը: Բոլոր տնօրենները հրավիրվել են վերոնշյալ հանդիպմանը:

Մի քանի ՍՊԸ տնօրենների հետ ՀԲԱ գրասենյակում նախնական հանդիպումները և անհատական զրույցները թույլ տվեցին եզրակացնել, որ նրանց մի մասը տեղյակ չէ ՀՀ Օրենքի մասին, իսկ տեղյակ լինելու դեպքում նրանք բավարար մոտիվացիա չունեն՝ իրենց երթուղիներում օրենսդրության պահանջներին հետևելու և վարորդներից պահանջելու, որպեսզի ուղերթի ընթացքում չծխեն մեքենայում: Երկու տնօրեն ասացին, որ նրանք արդեն իսկ խստիվ արգելել են իրենց երթուղիների վարորդներին ծխել, սակայն Ծրագրի աշխատակիցների անձնական փորձը ցույց է տվել, որ այդ երթուղիներում նույնպես առկա է ուղերթի ընթացքում վարորդների կողմից ծխախոտի օգտագործման «ավանդույթ»: Զրույցների ընթացքում պարզ դարձավ նաև, որ ՍՊԸ տնօրենների մեծ մասը նախընտրում է ունենալ անհատական հանդիպումներ և խուսափում են հասարակական միջոցառումներից:

2006թ. հուլիսի 14-ի հանդիպման համար պայմանավորվածություն էր ձեռք բերվել «Կոնգրես» հյուրանոցի հետ, պատրաստվել էին ներկայացվող և մասնակիցներին տրվող բոլոր նյութերը, այդ թվում՝ ներկայացվող շնորհանդեսի տպագիր տարբերակը, «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի պատճենը և ՀԲԱ կողմից երթուղային տաքսիներում փակցնելու համար առաջարկվող պաստառի օրինակ, որը կոչ է անում ուղևորին պաշտպանել իր իրավունքը՝ առանց ծխախոտի ծխի երթևեկելու (կցված են առաջին փուլի հաշվետվությանը):

2.2 Կազմակերպել հանդիպում ՍՊԸ-ների տնօրենների հետ, ուր նրանց կներկայացվի ՀՀ հակածխախոտային օրենսդրությունը և ներկա Ծրագիրը:

Հուլիսի 14-ին ժամը 15:00-ին «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» դահլիճում ՀԲԱ-ն կազմակերպել էր հանդիպում, ուր հրավիրվել էին Երևանի երթուղիները սպասարկող տնտեսավարող սուբյեկտների տնօրենները, ինչպես նաև «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական կազմակերպությունների դաշինքի գործընկերները: Հանդիպմանը հրավիրված 55 ՍՊԸ տնօրեններից եկել էր ընդամենը մեկը՝ թիվ 80 երթուղին սպասարկող «Ասկեր-Յունիոն» ՍՊԸ տնօրեն Աղվան Մուշեղյանը:

Այս փաստը խոսում է ոչ թե հանդիպումը նախապատրաստելու անհաջողության մասին, քանզի ՀԲԱ-ն ունի հարուստ փորձ նման շատ հանդիպումներ հաջողությամբ կազմակերպելու (այդ թվում՝ ղեկավար անձանց հետ, ինչպես օրինակ՝ վերջերս ավարտված հակածխախոտային օրենսդրության վերաբերյալ մեկ այլ ծրագրի շրջանակներում կազմակերպած երկու հանդիպումները Երևանի պոլիկլիկաների տնօրենների հետ), այլ վկայում է հայկական իրականությունում որոշ խավերի անպատրաստության մասին՝ ընդգրկվելու որևէ շահույթ չհետապնդող և/կամ հասարակական գործունեությունում: Թեև նախնական զրույցների ընթացքում ՍՊԸ տնօրենները կամ այլ պատասխանատուները թվացյալ հետաքրքրվածություն էին արտահայտում երթուղային տաքսիներում ծխելու խնդրի վերաբերյալ, սակայն նրանց իրական վերաբերմունքն այս խնդրին փաստվեց նրանով, որ նրանցից ընդամենը մեկը ցանկություն հայտնեց և ներկայացավ հանդիպմանը:

Կարելի է եզրակացնել, որ նշված ընկերությունների ներկայացուցիչները խուսափում են միմյանց և հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ ընդհանուր հանդիպմանը մասնակցելուց և հակված են իրենց մասին տեղեկատվությունը կոնֆիդենցիալ պահելուն: Այնուամենայնիվ, նախատեսված նյութը ներկայացվեց և քննարկվեց ներկա ՀԲԱ և «Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի ներկայացուցիչների և միակ ներկա հրավիրյալի հետ: Հանդիպման նյութերը, ինչպես նաև կազմակերպված հանդիպման հանդեպ նման վերաբերմունքի մեր վերլուծությունը փոստով ուղարկվել են բոլոր ՍՊԸ-ների հասցեներով :

Խնդիր 3

Իրականացնել հակածխախոտային ակցիա՝ նպատակաուղղված երթուղային տաքսիներում երթուղու ընթացքում վարորդների կողմից ծխախոտի օգտագործման նվազեցմանը:

3.1 Թռուցիկների բովանդակության մշակում և արտաքին ձևավորում:

Մշակվել և ձևավորվել է A5 չափի գունավոր թռուցիկ, որտեղ երթուղային տաքսիներից օգտվող բնակչության համար ներկայացվել են փաստեր պասիվ ծխելու վտանգների մասին, քաղվածք ՀՀ Օրենքից՝ քաղաքային տրանսպորտում ծխելն արգելված լինելու վերաբերյալ, ինչպես նաև կոչ ուղևորներին՝ պաշտպանելու ծխախոտի ծխից զուրկ տրանսպորտում երթևեկելու իրենց իրավունքը:

3.2 Թռուցիկների տպագրություն:

Թռուցիկները տպագրվել են 12 000 օրինակով՝ «Ասողիկ» տպարանում: Թռուցիկի մեկ օրինակ կցված են առաջին փուլի հաշվետվությանը:

3.3 Թռուցիկների բաշխում երթուղային տաքսիների ուղևորներին՝ 30 օրվա ընթացքում:

Ծրագրի աշխատակիցները սկսել են Երևանի առավել ծանրաբեռնված մի շարք կանգառներում բաժանել թռուցիկները երթուղային տաքսիներից դուրս եկող ուղևորներին:

3.4 Չորս FM ռադիոկայանների նույնականացում, նախատեսվող միջոցառման պայմանավորվածության ձեռք բերում և աշխատանքի պլանավորում:

Ըստ ծրագրի աշխատակազմի նախնական դիտարկումների, ընտրվել են երթուղային տաքսիներում հանրաճանաչ չորս ռադիոկայաններ՝ «Ռադիո Հայ FM 104.1», «Ռադիո Վան FM 103», «Ռադիո Արծագանք FM 103.5» և «Ավտոռադիո FM 89.8»: Ուրախալի է, որ նշված բոլոր ռադիոկայաններում մեծ ոգևորությամբ ընդունեցին տվյալ թեմայով ռադիոհոլովակները ձայնագրելու և հեռարձակելու պատվերները և զգալի զեղչեր կատարեցին ՀԲԱ-ի համար: Կնքված պայմանագրերի և ժամանակացույցների պատճենները կցված են առաջին փուլի հաշվետվությանը:

3.5 Կոչ-հայտարարությունների բովանդակության մշակում:

Մշակվել են երեք տեսակի հոլովակներ (տեքստերը կցված են առաջին փուլի հաշվետվությանը), որոնցից երկուսն ուղղված են վարորդին և կոչ են անում հետևել ՀՀ Օրենքի պահանջներին ու չվնասել ուղևորի առողջությանը: Երրորդն ուղղված է ուղևորին՝ կոչ անելով նրան հոգալ իր առողջության մասին և պաշտպանել իր իրավունքը:

3.6 Հեռարձակում 30 օր տևողությամբ:

Մշակված ռադիոհոլովակների հեռարձակումը սկսվել է երեք ռադիոկայաններով հուլիսի 6-ից և շարունակվել 30 օր՝ մինչև օգոստոսի 4-ը, իսկ «Ռադիո Արձագանքով»՝ հուլիսի 7-ից մինչև օգոստոսի 5-ը: Ըստ Ծրագրային առաջարկի, նախատեսվում էր ռադիոհոլովակները հեռարձակել օրը 8 անգամ հաճախականությամբ: Ռադիոկայանների կողմից տրված զեղչերն ավելի հաճախ հեռարձակումների հնարավորություն տվեցին: «Ռադիո Վան» և «Ավտոռադիո» կայաններով հոլովակները հեռարձակվեցին օրական 8 անգամ, «Ռադիո Արձագանք» կայանով՝ 9 անգամ, իսկ «Ռադիո Հայ» կայանով՝ 10 անգամ: Ծրագրի աշխատակազմի ընթացիկ մոնիտորինգի տվյալներով, հեռարձակումն ընթացել է ըստ ռադիոընկերությունների ներկայացված ժամանակացույցի:

Խնդիր 4

Կատարված աշխատանքի գնահատում և հանրայնացում:

Խնդրի Իրականացրման համար կատարվել են իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների ամփոփում և ՁԼՄ-տարածում:

4.1 Պատահականորեն ընտրված 50 երթուղային տաքսիներում վարորդի կողմից երթուղու ընթացքում ծխախոտի օգտագործման դիտարկում և արդյունքների ամփոփում:

Մշակվել են երկու տեսակի հարցաթերթիկներ՝ երթուղային տաքսիների վարորդների և ուղևորների համար: Հարցաթերթիկների հիմքում ընկած են ծրագրի առաջին փուլի հարցերը բացառությամբ մի քանի նոր հարցերի, որոնք

տեղ են գտել հետծրագրային հարցաթերթիկներում՝ օրինակները ներկայացված են հավելված 1-ում:

4.2 Հետծրագրային հարցումների անցկացում:

Պատահական կարգով ընտրվել են 42 երթուղիներ, որոնց 102 վարորդների և 508 ուղևորների շրջանում անց է կացվել հետծրագրային հարցում: Չնայած այն բանին, որ ըստ ծրագրի հարցումը պետք է անց կացվեր ակցիայի ավարտից անմիջապես հետո, որոշվեց 10 օրյա ընդմիջում տալ, որպիսի ակցիայի անմիջական ազդեցությունը դերակատարություն չունենա հարցման արդյունքների վրա:

4.3 Հարցումների արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ըստ ուղևորների կարծիքի 50,1% դեպքերում վարորդը ուղերթի ընթացքում ծխում էր (առաջին հարցման ժամանակ այս ցուցանիշը կազմում էր 50,4%): Փաստորեն ըստ ուղևորների ցուցանիշը մնացել էր գրեթե անփոփոխ:

Այս պարագայում հետաքրքրություն է ներկայացնում վարորդների պատասխանը, ուր նրանց միայն 34,2% է խոստովանել, որ ուղերթի ընթացքում ծխում է (առաջին հարցման 45,9%-ի փոխարեն): Այստեղ հնարավոր է 2 տարբերակ՝

1. վարորդները իսկապես ավելի հազվադեպ են սկսել ծխել ուղերթի ընթացքում
2. վարորդները 1 ամիս շարունակ լսել են ռադիոհոլովակները և գուցե ենթագիտակցբար, ցանկանում են ավելի դրական կերպով ներկայանալ հասարակությանը:
3. ուղևորների իրավական իրազեկման բարձրացման միջոցով բարձրացել է վարորդներ նկատմամբ նրանց կողմից հասարակական ազդեցությունը:

Արդյոք ծխող վարորդին նկատողություն արեցին ուղևորները, թե ոչ: Այս հարցին ի պատասխան հնչած կարծիքները կրկին կտրուկ տարբերվում են քանի որ 34,7% վարորդները հայտնում են նման ուղևորների գոյության մասին (նախնական 23,6%-ի փոխարեն), մինչդեռ ըստ ուղևորների միայն 6,7% դեպքերում են ուղևորները պաշտպանում սեփական շահերը: Ուշագրավ է նաև այն փաստը, որ և ուղևորները և վարորդները նշում էին, որ գրեթե միշտ նման

նկատողությունները ուղեկցվում էին ռադիոկայաններով հեռարձակվող հոլովակների և բաժանված թռուցիկների վրա հղումներով: Զարմանալի է նաև ուղևորների պասիվությունը հաշվի առնելով նաև այն պարագան, որ նկատողություն ստանալուց հետո 77,8% դեպքերում ըստ վարորդների և 70,6% դեպքերում ըստ ուղևորների երթուղայինի վարորդները հանգցրել են ծխախոտը:

Կրկին բարձր ցուցանիշների վրա է գտնվում և ուղևորների և վարորդների տեղեկացվածությունը ծխելու վնասների մասին սեփական օրգանիզմի և շրջապատի համար կազմելով համապատասխանաբար (80,8% և 87,8%) վարորդների և ուղևորների շրջանում: Ուրախալի է նաև որ կտրուկ աճել է տեղեկացվածությունը օրենքի գոյության և նրա դրույթների վերաբերյալ կազմելով վարորդների շրջանում 66,7% (նախնական 41,7%-ի փոխարեն) և 72,6% (նախնական 33,8%-ի փոխարեն) ուղևորների շրջանում:

Հարցված ուղևորների 56%-ը հայտնել է, որ վերջին մեկ ամսվա ընթացքում լսել է համապատասխան ռադիոհոլովակներ կամ ստացել է թռուցիկներ:

4.4 Մամլո ասուլիսի կազմակերպում և ծրագրի արդյունքների հրապարակում:

Սույն թվականի սեպտեմբերի 7-ին ժուռնալիստների տանը կազմակերպվեց մալո ասուլիս, որի ընթացքում ներկայացվեցին ***«Քաղաքային տրանսպորտում ՀՀ հակածխախոտային օրենսդրության կիրառման մոնիտորինգ և հասարակության իրավական իրազեկության բարձրացման միջոցով աջակցություն օրենքի կատարմանը»*** ծրագրի մանրամասներն ու արդյունքները: Հավաքված շուրջ 2 տասնյակ լրագրողների ուշադրությանը ներկայցվեց ծրագրի կազմակերպման, անցկացման և արդյունքների վերլուծության հետ կապված ողջ ինֆորմացիան: Բացի այդ, մամլո ասուլիսի բոլոր մասնակիցներին բաժանվեցին ծրագրի ընթացքում ստեղծված հակածխախոտային ռադիոհոլովակներով լազերային սկավառակներ՝ վերջիններիս լայն օգտագործման և տարածման ակնկալիքով: Ասուլիսի կազմակերպիչները պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին: Պետք է նշել, որ ծրագիրը մեծ հետաքրքրություն առաջացրեց զանգվածային լրատվմիջոցների ներկայացուցիչների շրջանում և լայնորեն լուսաբանվեց վերջիններիս կողմից:

Ամփոփելով ծրագրի արդյունքները կարելի է հանգել մի շարք եզրակացություններ՝

1. Ծրագրի արդյունքում հնարավոր դարձավ որոշակիորեն (գրեթե կրկնակի անգամ) բարձրացնել բնակչության մի ստվար հատվածի իրազեկությունը ՀՀ «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» օրենքի գոյության և նրա մի քանի դրույթների վերաբերյալ: Մասնավորապես՝ քաղաքային տրանսպորտում ծխախոտի օգտագործման արգելքի վերաբերյալ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ցանկալի է սույն ինֆորմացիան հնարավորության դեքում ավելի լայն կերպով լուսաբանել ՀՀ բնակչության շրջանում հնարավոր բոլոր մեթոդներով:
2. Ծրագրի ավարտից հետո էլ երթուղային տաքսիներում փակցված են քաղաքային տրանսպորտում ծխախոտի օգտագործման արգելքի վերաբերյալ մեր կողմից մշակված պաստառները և ուրախությամբ ցանկանում ենք փաստել այն իրողությունը, որ «Երևանտրանս» ՓԲԸ-արդեն ինքն է շարունակում է այդ գործընթացը:
3. Ստեղծված ռադիոհոլովակներն ու թռուցիկները, ունենալով կրկնակի ուղղվածություն, որոշակի ազդեցություն ունեցան և վարորդների և ուղևորների գիտակցության վրա: Առաջիններիս ստեղծված հոլովակներում հորդորվում էր չթունավորել իրենց շրջապատող մարդկանց որոնց ամբողջ «մեղքը» կայանում էր իրենց վարած երթուղային տաքսիով երթևեկելու մեջ: Ցավալի է, որ վարորդների զգալի մասի համար շարունակում է սեփական, տվյալ պարագայում օրենքին հակասող ցանկությունները, գերադասելի մնալ շրջապատի առողջության պահպանման հարցերից: Միաժամանակ խիստ անբավարար կարելի է գնահատել նաև երթուղիները սպասարկող ընկերությունների տնօրենների պատրաստակամությունը աջակցելու համապատասխան օրենքի դրույթների իրականացմանը երթուղային տրանսպորտում:
4. Ուղևորներին ուղղված հոլովակները կոչ էին անում պաշտպանել պետության կողմից ամրագրված չթունավորվելու իրավունքը: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ չնայած այն բանին, որ ուղևորների ավելի քան 50%-ը ծանոթացել էր թռուցիկներին և լսել ռադիոհոլովակները նրանց միայն մի փոքր մասը՝ (6%) է պատրաստ պաշտպանել սեփական իրավունքները:

5. Չփորձելով վերլուծել թե ինչու վարորդները չեն հարգում ուղևորների իրավունքները, իսկ վերջիններս չեն պաշտպանում սեփական առողջությունը գալիս ենք այն եզրակացության, որ տվյալ պարագայում ՀՀ «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» օրենքի լայն կիրառման համար խիստ անհրաժեշտ է ենթաօրենսդրական ակտերի ստեղծումը, որոնցով կսահմանվեին խիստ պատիժներ օրինազանցների նկատմամբ: Կարծում ենք, որ այդ պարագայում միանշանակ կպակասեր օրինազանցների և հետևաբար նրանց գործունեությունից տուժողների քանակը:
6. Վերջում կցանկանայինք նշել, որ նմանատիպ ծրագրերի արդյունավետությունը ուղիղ համամետական է ծրագրերի հաջորդականությանը և միայն երկարատև և հետևողական աշխատանքը կբերի ցանկալի արդյունքների:

Ծրագրի մոնիտորինգ

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի ղեկավարի կողմից կատարվել է ծրագրով նախատեսված բոլոր գործողությունների մոնիտորինգ.

Մոնիտորինգի տվյալներով, նշված գործողությունների կատարման մեջ նախատեսված պլանից որևէ էական խախտում չի նկատվել: Ծրագրի իրականացման ընթացքում դիտարկված վրիպումները տեղում քննարկվել են և համապատասխան խորհուրդներ են տրվել՝ դրանք շտկելու համար:

Հայկական Բժշկական Ասոցիացիան ծրագիրը համարում է ամբողջությամբ կատարված և արդյունավետ: Կարծում ենք, որ սույն ծրագիրը կարելի է համարել Հայաստանի Հանրապետության տարածքում մինչ այժմ իրականացված հակածխախոտային լավագույն ծրագրերից մեկը, իսկ մեր կազմակերպությունների համագործակցությունը հաջողված ու արդյունավետ: Հուսով ենք, որ հետագա համագործակցությունը նույնպես կլինի բեղմանվոր և արդյունավետ և կնպաստի մեր երկրի զարգացմանն ու բարգավաճմանը:

Հավելված 1

Հարցաթերթիկ վարորդների համար

1. Ծխու՞մ եք

   ☐ այո ☐ ոչ→ անցեք հարց 5-ին ☐ թողել եմ
2. (ինչքան ժամանակ է՝_____)
3. Ծխու՞մ եք արդյոք երթուղու ընթացքում (եթե թողել եք՝ մինչև թողնելը)

   ☐ այո ☐ ոչ→ անցեք հարց 5-ին
4. Եթե ծխում եք, ապա Ձեր ուղևորները Ձեզ նկատողություն անու՞մ են արդյոք

   ☐ հաճախ ☐ եզակի դեպքերում

   a. ոչ, երբեք→ անցեք հարց 5-ին
5. Եթե ուղևորը խնդրում է Ձեզ չծխել, ի՞նչ եք ձեռնարկում

   a. հանգցնում եմ ծխախոտը

   b. ոչինչ չեմ ձեռնարկում (շարունակում եմ ծխել)

   c. այլ _____
6. Գիտե՞ք, որ ՀՀ գործում է «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» օրենքը

   ☐ այո ☐ ոչ → անցեք հարց 7-ին
7. Ձեր կարծիքով, այդ օրենքն արգելու՞մ է երթուղային տաքսիներում ծխելը

   ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ
8. Ձեր կարծիքով, վնասու՞մ է արդյոք ծխախոտի ծուխը շրջապատում գտնվող չծխող մարդկանց առողջությանը

   ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

   a. այլ _____

Տարիքը _____

Երթուղու համարը _____

Ամսաթիվ _____

Հարցազրուցավար _____

Հարցաթերթիկ ուղևորների համար

1. Ծխու՞մ եք

   ☐ այո☐ ոչ ☐ թողել եմ (ինչքան ժամանակ է՝_____)

2. Կարծու՞մ եք, որ երթուղային տաքսիում ծխելը սխալ է

   ☐ այո ☐ ոչ ☐ այլ _____

3. Ծխու՞մ էր արդյոք երթուղու ընթացքում վարորդը

   ☐ այո ☐ ոչ → անցեք հարց 7-ին

4. Դուք կամ այլ ուղևորները նրան նկատողություն արեցի՞ն արդյոք

   ☐ այո →անցեք հարց 6-ին ☐ ոչ

5. Ինչու՞ →անցեք հարց 7-ին

a. խուսափում եմ կոնֆլիկտային իրավիճակից
b. անտարբեր եմ այս խնդրին
c. այլ _____

6. Եթե ուղևորը խնդրել է վարորդին չծխել, ի՞նչ եղավ նրա պատասխանը

a. հանգցրեց ծխախոտը
b. ոչինչ չձեռնարկեց (շարունակեց ծխել)
c. այլ _____

7. Գիտե՞ք, որ ՀՀ գործում է «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» օրենքը

   ☐ այո ☐ ոչ → անցեք հարց 9-ին

8. Ձեր կարծիքով, այդ օրենքն արգելու՞մ է երթուղայիններում ծխելը

   ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

9. Ձեր կարծիքով, վնասու՞մ է արդյոք ծխախոտի ծուխը շրջապատում գտնվող չծխող մարդկանց առողջությանը

   ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

a. այլ _____

10. Վերջին մեկ ամսում հակածխախոտային ռադիոհոլովակներ լսե՞լ եք կամ թռուցիկ ստացե՞լ եք ☐ այո ☐ ոչ

Սեռը ___ Տարիքը _____ Երթուղու համարը _____

Ամսաթիվ _____

Հարցազրուցավար _____